ՏԵՂԵԿԱՆՔ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հոդված 202. Հատուկ հայցային վարույթի կարգով քննվող գործերը

1. Դատարանը հատուկ հայցային վարույթի կարգով քննում է հետևյալ գործերը.
1) ընտանեկան գործերը.
2) Հայաստանի Հանրապետություն անօրինական տեղափոխված կամ Հայաստանի Հանրապետությունում ապօրինի պահվող երեխայի վերադարձի վերաբերյալ գործերը.
3) առանձին աշխատանքային վեճերով գործերը.
4) կորպորատիվ վեճերով գործերը.
5) խմբային հայցի հիման վրա քննվող գործերը.
6) Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի և անվճարունակ բանկի, վարկային կազմակերպության, ներդրումային ընկերության, ներդրումային ֆոնդի կառավարչի և ապահովագրական ընկերության ժամանակավոր ադմինիստրացիայի որոշումների բողոքարկումը.
7) «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» օրենքով նախատեսված պաշտպանական որոշման վերաբերյալ գործերը:
8) Պատվին, արժանապատվությանը կամ գործարար համբավին պատճառված վնասի հատուման գործերի վարույթը

Գլուխ 22.1 Պատվին, արժանապատվությանը կամ գործարար համբավին պատճառված վնասի հատուման գործերի վարույթը

Հոդված 203.1 Հայցադիմումը վարույթ ընդունելը

1. Դատարանը հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը լուծում է այն ներկայացվելուց հետո՝ եռօրյա ժամկետում:

Հոդված 203.2 Պատվին, արժանապատվությանը կամ գործարար համբավին պատճառված վնասի հատուման վարույթի ժամկետները.

1. Պատվին, արժանապատվությանը կամ գործարար համբավին պատճառված վնասի հատուման հայցերը առաջին ատյանի դատարանում քննվում և լուծվում են հայցադիմումը վարույթ ընդունելուց հետո ՝ երկամսյա ժամկետում:

2. Վերաքննիչ դատարանը եզրափակիչ դատական ակտի դեմ ներկայացված բողոքը քննում և որոշում է կայացնում բողոքը վարույթ ընդունելուց հետո երկամսյա ժամկետում:

Հոդված 203.3 Հայցադիմումի պատասխան ներկայացնելու ժամկետը:

1. Հայցադիմումի պատասխանը ներկայացվում է հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշումը ստանալուց հետո մեկշաբաթյա ժամկետում: